



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an antique book. The spine, on the left, is bound in a dark red, textured material, possibly leather or cloth. The main cover area is decorated with marbled paper featuring a pattern of irregular, organic shapes in shades of tan, brown, and cream, with thin veins of green and blue. A small, rectangular, light-colored paper label is affixed to the lower-left corner of the cover, containing the number 2604 printed in a dark blue or black font.

2604



1693

~~2442.~~

ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՒ ՀԵՄԵՈՏ ԴԵԼԵԳԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵՍՅՑ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑՅՈՅ ՀԱՍՏԱՏԵՒԼ

Յամի Տեան 1846. Յունիս 19:



Ար հաւատամք որ Վրիստոնէական Եկեղեցին ընկերու
թիւն մքն է Վրիստոսի բուն իւր ձեռօքը հաստատ
եալ, այն նպատակաւ որ Լատուծոյ վրայ զիտութիւն՝
անոր հոգեւոր երկրպագութիւն եւ ամէն Վրիստոնէ
ական առաքինութեանց գործադրութիւնը սորվեցընէ
մարդոց եւ Տնայուն պահէ անոնց մէջ, եւ ընդհանրա
պէս խօսելով օգնէ՝ անոնց հոգին երկնից համար պատ
շաստելու :

Ար հաւատամք որ Սուրբ Գիրքը՝ այսինքն Հին եւ
Նոր Կտակարանն է Եկեղեցւոյ մէկ հատիկ անսխալ եւ
կատարեալ կանոնը, եւ ամէն Վրիստոնէայք պարտա
կան են զանոնք իրրեւ իրենց հաւատոյ եւ վարուց ա
ռաջնորդը ընդունիլ :

Ուստի մէք Հայազգի Եւեոտարանական Վրիստոն
էայքս Լատուծմէ վախճալով եւ իւր Եւեոտարանին հը
նազանդելով՝ մերժեցինք եւ մեկ զի ձգեցինք մեզմէ այն
ամէն մարդկային ասանդութիւնները եւ արարողութիւն

Բ. Պոզման
1846.

2604



ները որ հակառակ են Մետաբանին եւ Քրիստոնէսական Եկեղեցւոյ մարտութեանը, որոնք մեր Մշտին Պատրիարքը կը պահանջէ մեզմէ որ ընդունինք: Ընաւ զատվելու միտք չունենալով այն եկեղեցիէն, որուն անդամներն էինք առաջուց՝ երկայն ժամանակ միացած կեցել էինք անոր մէջ, Քրիստոսի՝ Սարգսրէից՝ եւ Մաքելոց սորվեցուցած նախկին հաւատքէն անոր մտրելուն վրայ ողբալով, եւ զանիկայ Սուրբ Մետաբանաւ լուսաւորելու եւ նորոգելու յայտնի նպատակով:

Եւ որովհետեւ կ'ընդունինք եւ միշտ ընդունած ենք Եկեղեցւոյ Նիկիական Հանգանակը ամբողջ, որն որ ամեն Քրիստոնէսայք կ'ընդունին. եւ մինչեւ չորս հարիւր թուականին Եկեղեցւոյ անդամներուն վրայ հարկ դրված հանգանակ չ'կար անկէ ի զատ, եւ այն ժամանակէն հետէ մինչեւ այս 1846 տարին մասնաւորապէս այս մարդկային աւանդութիւնները եւ արարողութիւնները պարունակող հանգանակ շինված եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անդամներէն ընդունիլ պահանջված չէր, վասն որոյ ընդհանուր Քրիստոնէից հին հանգանակը ընդունելովնիս կրնայինք նոյն Եկեղեցւոյ օրինաւոր անդամները սեպվիլ:

Իսկ այս 1846ին Սատթէոս Մրքեպիսկոպոս Հայոց Պատրիարքը՝ Նոր Հանգանակ իւ հնարեց որ Քրիստոսի եւ Մաքելոց սորվեցուցած հիմնական վարդապետութեանց մեծապէս կը հակառակի, եւ Քրիստոնէից մէջ մինչեւ հիմա դանդված հանգանակներէն կը տարբերի մասնաւորապէս մարդկային աւանդութիւնները պարունակելով, որոնք որ մեր խղճմանքը չ'թողուր որ ըն-

1846
1847

հունիմք: Եւ յս հանգանակը կը դանըվի «Պատասխան Եւ
Էտտարանական Վրիստոնէից զէմ հրատարակված առա-
ջին յայտարարութեան», կոչված մեր տետրակին մէջ
(երես 22):

Եւ յն հանգանակին երբորդ յօդուածին մէջ Պատրի-
արզը կը պահանջէ մեզմէ որ եօթն խորհուրդները ըն-
դունիմք, երբոր Սուրբ Գիրքը միայն երկու խորհուրդ
ընդունիլ կը սորվեցընէ՝ Մկրտութիւն, եւ Հաղորդու-
թիւն. եւ ըստ այնմ միայն երկու խորհուրդ կ'ընդու-
նին Եւրոպայի եւ Եմբիգայի այլ եւ այլ դասուներու
մէջ դանըված 80,000,000 Բոօթեղանգնները:

Զորբորդ յօդուածին մէջ ուրիշ սուտ վարդապետու-
թիւններէն ի զատ մեզմէ կը պահանջէ ընդունիլ Մկրտու-
թիւնը ոչ թէ Սուրբ Գրոց համեմատ ինչպէս որ կ'ըն-
դունիմք, այլ կը պահանջէ այնքան հարկաւոր դաւանիլ
անիկաց փրկութեան որ կատարելապէս անմեղ էակ մը
չ'կրնար փրկուիլ առանց անոր. եւ ասանկով Մկրտու-
թիւնը Եստուծոյ օրինաց կատարեալ հնազանդութենէն
աւելի աղէկ եւ աւելի հարկաւոր կ'ընէ: Եւ յն յօդու-
ածին մէջ նաեւ կը պահանջէ մեզմէ որ դաւանիմք թէ
մեզաւորը առանց քահանային արձակմանը անհնար է որ
մեզաց թողութիւն եւ յախտնական կեանք դանայ. եւ
ասանկով մարդը Եստուծոյ տեղը կը դնէ:

Ինչ երբորդին մէջ կը պահանջէ որ հաւատամք թէ հա-
ղորդութեան հացը եւ գինին Վրիստոսի ճշմարիտ եւ իրա-
կան մարմինն եւ սրիւնն է, երբոր Եւտտարանը կ'իմացընէ
որ Վրիստոս իւր փառաւորեալ մարմնովը երկինքն է, եւ
հաղորդութիւնը անոր մարմինը յիշատակող նշանն է:

Մեյերորդին մէջ կը պահանջէ որ ընդունիմք թէ պէտք է երկրպագութիւն ընել խաչերուն՝ պատկերներուն եւ մասունքներուն, որ ասիկայ մարդոց ձեռաց գործքերուն առջեւ երկրպագութիւն ընել է. կը պահանջէ նաեւ որ ընդունիմք Արքայ բարեխօսութիւնը, երբոր Սուրբ Վերքը կը սորվեցնէ մեզի միայն Աստուծոյ երկրպագութիւն ընել հոգւով եւ ճշմարտութեամբ առանց նիւթական նշանի, եւ միայն Յիսուս Քրիստոսի մեր միջնորդին ձեռօքը:

Լօթներորդին մէջ կը պահանջէ որ եկեղեցւոյ ամէն ըսածները ընդունիմք, բայց մենք նախնի Քրիստոսեկից հետեւելով՝ միայն Սուրբ Վերքը իբրեւ անսխալ կ'ընդունիմք:

Ութերորդին մէջ ուրիշ բաներէն զատ կը պահանջէ որ ընդունիմք թէ չար եկեղեցական մը արատ չէ ընդհանուր եկեղեցւոյ. բայց մենք կ'ընդունիմք որ եկեղեցւոյ մէջ շատ չար եկեղեցականներ կան, բայց չեմք ընդունիր որ արատ չեն անոնք:

Եւ վերջապէս Մատթէոս Արքեպիսկոպոս Հայոց Պատրիարքը իւր շինած հանգանակին իններորդ յօդուածին մէջ կը պահանջէ մեզմէ որ ամէն այն մարդիկը՝ որոնք ուրիշ բաներէն զատ, որ հանգանակին մէջ յիշմած են, կը քարոզեն թէ խաչերը՝ սրբոց մասունքները եւ պատկերները երկրպագելի չեն, նշովնէ՛ք եւ մերժեմք իբրեւ ամբարիշտ եւ հայհոյիչ Արքայ Հօգոյն եւ իբրեւ թշնամի Աստուծոյ եւ իւր ամենայն սրբոց: Եսանկով կը պահանջէ մեզմէ որ վրանիս ատենէ՛ք Վերմանիոյ Վարդիոյ Անդրիոյ եւ ուրիշ անգլաց ամէն Լոթնես-

դանդները նղովել եւ բանադրել . նաեւ ամէն ուրիշ աղ-
գերը եւ անձինքը, որոնք չեն ընդունիր խաչերու մա-
տուքներու եւ պատկերներու երկրպագութիւն ընել :

Իայց մենք առաւել Մտուծոյ քան թէ մարդոց հը-
նազանդելով՝ չընդունեցինք Պատրիարդին այս նոր հան-
գանակը, վասնորոյ եկեղեցիէն հանեց Վմեղ եւ հրապա-
րակաւ եւ յսկանէ յանուանէ բանադրեց :

Յիրաւի ասկէ առաջ ալ զանազան հաբաճանքներ
քաշած էինք սուրբ Մեծտարանին պարզ վարդապետու-
թեանցը յարեւնուս համար, եւ հետեւաբար մարդկային
աւանդութիւնները մերժելուս համար :

Ինչպէս 1839ին՝ որոնց վրայ որ կասկած կար թէ Մե-
տարանական են, անողորմաբար աքսորվեցան մայրաքաղաք-
էս եւ շատ փնասներ կրեցին, որոնց մեծ մասը եկեղեցական
էր. նաեւ մեզմէ մէկնալ երկու տարի առաջ Մրմաշ եւ
անկէջ Աեսարիա աքսորվեցաւ, որ աս ալ եկեղեցական էր :

Մյն ատենները Վուրտպէլէնկի մեջ մեզմէ երեք հո-
գի անողորմաբար ծեծ կերան եւ իրենց բնակարաններէն
վըրնտրվեցան, ոչ սյլ ինչ պատճառաւ՝ այլ միայն Մա-
տուծոյ խօսքին սիրով յարեւնուն համար : Նոյնպէս
Մտափազարի մեջ եկեղեցական մը նոյն պատճառա-
բանեցին եւ մօրութքը ածիլելով խրկեցին Մրմաշ՝ որ եր-
թայ արտերը հերկէ : Արրինի մեջ եկեղեցական մը ե-
րեք տարի առաջ անողորմաբար ծեծ կերաւ եպիսկոպո-
սէն Մեծտարանը քարոզելուն համար : Տրապիզօնի մեջ
մեզմէ մէկը Վարահիսար աքսորեցին երկու տարի առաջ :
Նոյնպէս մէկն ալ տարի մը առաջ Տրապիզօնէն Պօլիս
խրկեցին, եւ Նեփիսուլէյի հիւանդանոցը շղթաներով

կայեցին. առաւել գէշ վարվելով անոր հետ՝ քան թէ ամենանուստ եղեռնագործի մը հետ, ոչ այլ ինչ պատճառաւ, այլ Աւետարանը ընդունելուն համար: Թող տեղ տեղ բանտարգրւոյններուն եւ ծեծ ուտոյններուն ու տոյժ տուոյններուն թիւը, որոնք մէկիկ մէկիկ պատմել չ'ներեր սոյ գրութեան ընդարձակութիւնը:

Իսոյց այժմեան Պատրիարք Սնտթէոս Արքեպիսկոպոսը՝ երբոր սկըսեց նղովել եւ բանադրել զմեզ, հնարքն ալ գտաւ աւելի ծանր նեղութիւններ մեր վրայ բերելու. կեղծելով՝ թէ իւր հոգեւոր իշխանութիւնը մեր վրայ կը բանեցընէիր. թէպէտեւ ըրածները ուրանալով կը սնդէ թէ Աւետարանականաց բռնութիւն ըրած չունիմ: (Տես Պատրիարքին եւ իւր ժողովոյն ընդդէմ Աւետարանական Քրիստոնէից հրատարակած առաջին եւ երկրորդ յայտարարութիւնները):

Մէկ քանի ամիս առաջ Պօլսոյ մէջ Աւետարանական Հայոց ամէն խանութները գոցել տուաւ: Երեսները տուններուն դուրս եղան, եւ ծնողքներն իրենց զաւկըններէն էրիկները կընիկներէն ահամայ բաժնըվեցան: Պատուիրեց քաղաքացիներնուս որ մեզ տուններին չընդունին, հետերնիս առուտուր չընեն, ու բարեւ չ'տան չ'տանն: Հացագործներուն ու ջրկիրներուն պատուիրեց որ մեզն հաց չ'ուր չ'տան: Տուններնիս՝ խանութնիս՝ ստացուածքնիս նղովեց, որ մէկը հետերնիս հաղորդակցութիւն մը կամ գործ մը չ'կրնայ ընել:

Արակիէ կերակի տուած քարոզներովը եւ ըրած նըղովքներովն ու բանադրանքներովն ժողովուրդը զրգռեց վրանիս, եւ հետեւապէս տուններնիս քարկոծեցին ու կոխե-

ցին, բռնի ներս մտան, եւ մեզ ալ ճամբաները քարի կը բռնէին :

Աւրիշ քաղաքներու վարդապետներն ու առաջնորդները ոտք հանեց, որոնք պաշտօնին իրմէն առած ըլլալնուն համար՝ ստիպւեցան անգթութեամբ սաստիկ հալածանք հանելու Պատրիարքին նոր հանգանակը չ'ընդունուիլնուն զէմ : 'Նիկոմիդեայի առաջնորդը եկեղեցական մը իւր պաշտօնէն հանելէն՝ ետեւ բանտը նետել տուաւ, բանտէն հանեցին առաջնորդաբանը Թարին, եւ երբ տեսան որ տակաւին չ'ընդունւիր այն հանգանակը, ոչ միայն մօրութիւն՝ այլ եւ զլուխն ալ ածիլեցին եւ այնպէս անհասարկ նախատանօք փողօցէ փողօց պտըտցնելէն ետեւ կրկին բանտը դրին : 'Նիկոմիդեայի եւ Ատափագարի միջ ոչ տուն մնաց եւ ոչ մարդ մը որ չ'քարկոծվեցաւ . եւ Ատափագարի միջ գունդ մը մարդիկ էրին՝ Չորտապետներն ու առաջնորդներն, ոչ միայն տուները կոխեցին՝ այլ եւ ձեռքերնին ինչ որ եկաւ նէ կտրեցին թափեցին, ծառերը կտրտեցին, պարտէշները սուրեցին, հաւերը ու արջառները սասկըցուցին, մենք ալ ստիպվեցանք որ վախճինք կեանքերնիս ազատելու համար :

Տրապիզօնի առաջնորդը այս հանգանակը չ'կ'ընդունիր ձեռքէն՝ բանադրեց եւ շորստրեց . երիտասարդ մը իննը տուն հարուած ընդունեց եւ ուրիշ տանջանքներ քաշելէն ետեւ քսան եւ չորս ժամ առանց հացի ջուրի բանտը մնաց : Մէկ ուրիշն ալ հարիւր յիսուն հարուած ընդունեց, եւ միւսներնսլ պէս պէս վնասներու եւ նախատանաց տակ ինկան :

Կարինի միջ մարգուն մէկը Պատրիարքին նոր հան-

դանակը չընդունելուն համար պառկըցուցին առաջնորդին հրամանաւր եւ սաստիկ ծեծ մը քաշեցին, եւ քանի որ շորս հոգի զինքը կը ծեծէին՝ քահանայ մը ոտքովը երեսին այնչափ զարկաւ որ քթէն բերնէն արիւն ցածկեց:

Եւ մտերս խուճը մը կատղած մարդիկ եկեղեցակաւնի մը վըսյ յարձակեցան, եղած տունէն դուրս քաշեցին, եւ երեսը թուքնելով ու ծեծելով ու մօրուքէն քաշելով առաջնորդարանը տարին, ուր իրենց անօրէնութեան վարձքը ընդունելուն՝ շուտով կրկին նոյն տունը դարձան վազեցին հոն գանդվողներուն՝ վոսյ եւ սոսկալի անգթութեամբ ծեծելով անկենդան զիի պէս ձգեցին, պատուհանները՝ դռները եւ կահ կարասիքը կըտոր կտոր բրին, ուղածնին գողցան, տունը աւերակ դարձուցին, ձգեցին գացին:

Եսանկ՝ եւ ասոնց նման եղած բաներուն ամէնուն պատասխանատու է Պատրիարքը, վասն զի անանկ մարդոց ձեռքովը եղած են՝ որոնց պաշտօնը իւր ձեռքն է, ուստի իրենց շահուն համար կ'ստիպվին իր կամքը կատարելու:

Իոլոր այս ձեռքէն եկածը ընելով՝ կըցածին չափ աշխատեցաւ մեզ նեղը ձգելու, որ ընդունիլք եւ ստորագրեմք իր նոր հանգանակը. եւ այսպէս իր հոգեւոր յանցանք սեպածներուն դէմ՝ մարմնաւոր պատժոյ սքանչելի օրինակ մը կը թողու գալու դարերուն:

Եւ վերջապէս բոլոր այս բաներէն ետեւ Հռոմիսի Տին Պատրիարքը նոր կոնդակ մը հանեց, որ ամէն եկեղեցիներու մէջ կարգացվեցաւ կաթուղիկէ եկեղեցւոյ առնախմբութեան օրը. այս կոնդակին մէջ մէկ քանի մեծ սուտեր եւ զրպարտութիւններ կան ի զարմացումը լսողաց:

Եւ այս բանադրանաց թուղթը անընդհատ ամէն տարի նոյն օրը շաբաթի կարգացվն բոլոր իր իշխանութեան տակը մնացող ժողովրդոց մէջ : Եւ յայտն յաւիտեան կը բաժնէ զմեզ Հայոց եկեղեցիէն , այս կոնդակին մնայուն հրամանաւը եւ բարձր իշխանութեամբը :

Համբերութեամբ կրեցինք բոլոր այս վնասները , ու նախ եւ առաջ աղաչեցինք Պատրիարզին որ ազատէ զմեզ նեղութիւններնուս , ցուցնելով մեր Վրիստոնէական ուղղափառ դաւանութիւնը . եւ Օսմանեան հօր Տէրութեան հնազանդ հպատակներ ըլլալով՝ ամէն քաղաքական իրեքու մէջ իրեն ունեցած կատարեալ հնազանդութիւննիս :

Երբ տեսանք որ ոչ միայն մեր աղաչանացը սկանջ չ'կատեսց' այլ եւ հալածանաց խստութիւնը աւելցուցան տոները մենք ալ Օսմանեան Հօր Տէրութեան դարձուցինք մեր աղերսանքը՝ եւ ան իւր փառաւոր պաշտպանութիւնը մեր վոյց հովանի ըրաւ : Եւ այց Պատրիարզը մինչեւ չ'իմա ալ կը շարունակէ ժողովուրդը մեզի դէմ դրդուել , խստիւ պատուէր տալով որ մեզ չ'ընդունին իրենց տուները եւ խանութները եւ ոչ մէկ հաւորդակցութիւն մը ընեն մեզի հետ :

Եւ հա այս եղած բաները կ'արդարացնեն Հայաստանեայց Եւեոտարանական Եկեղեցի կազմը վեւիս :

Որովհետեւ յաւիտեանական բաժանմամբ դատված եմք Հայոց եկեղեցիէն , եւ հնար չ'կայ որ դարձեալ միանամք առանց անոր հոգեկորուստ սխալմանքները ընդունելու , վասնորոյ հարկ եղեւ որ զատ Հայաստանեայց Եւեոտարանական Եկեղեցի մը ըլլամք , եւ եղանք ալ իրաւամբ Եստուծոյ շնորհքով :

551

ԱրովՏեաեւ Պատրիարզը իւր բոլոր կարողութիւնը եւ իշխանութիւնը բանեցուց մեր կործանմանը համար, եւ ջանաց որ մեզ զրկէ եկեղեցւոյ ամէն արսօնութիւնէն եւ խորհուրդներէն՝ որոնք երկրաւոր բարիքներէն գերազանց կը սեպեմք, վասնորոյ մեր՝ անձը պաշտպանելու իրաւունքնիս՝ եւ հոգիներնուս փրկութիւնը՝ եւ մեր հոգեւոր շինութիւնը փնտրուելու անհրաժեշտ իրաւունքնիս՝ ոչ միայն կ'արդարացընեն մեր զատ Արկեղեցի մը ըլլալը, այլ եւ կը պահանջեն որ ըլլամք :

ԱրովՏեաեւ պարտական եմք մեր ընտանեացը եւ զաւկրներուն սորվեցընել Աէհօվային պատուէրները եւ անոր մեղի յայտնած ամէն ճշմարտութիւնները, եւ որովՏեաեւ ստիկայ՝ առանց Աւետարանին հրապարակաւ քարոզութեանը կատարեալ չըլլար, ուստի իրաւամբ Աւետարանական Արկեղեցի մը կը կազմելիմք այս նպատակին համար :

ԱրովՏեաեւ Վրիստոս իրբեւ Արկեղեցւոյ գլխի հաւատալով՝ անոր վարդապետութիւնները ընդունելով՝ եւ սրտանց հնազանդելով Սուրբ Աւետարանին, Վրիստոսի մի՛ սուրբ՝ ընդհանրական եւ Առաքելական Արկեղեցւոյ անգամներն եմք, վասնորոյ պարտական եմք այս անգամ ըլլալնիս դաւանել՝ ամենայն Աւետարանական կանոնօք եւ արտօնութեամբ մասնաւոր եւ առանձին Արկեղեցի մը կազմելելով :

ԱրովՏեաեւ Սուրբ Աւետարանը Վրիստոնեայներէն կը պահանջէ որ աղօթք ընեն ամէն մարդոց համար, մանաւանդ թագաւորաց եւ ամէն իշխանութիւն ունեցողներուն համար, նաեւ կը պահանջէ որ հրապարակաւ ընեն ու չէ թէ մէկ տեղ ժողովուրդ թողելով, եւ հնա-

դրնդութիւն ցուցնեն իշխանութեանց իրրեւ Աստուծ-
մէ կարգեալներու՝ վասնորոյ մենք իրրեւ Օսմանեան Տէ-
րութեան խաղաղ եւ հնազանդ հպատակներ՝ պարտական
եմք Ահեղնցի մը ձեւանալ, ուր Աստուծոյ կամայը հա-
մեմատ անդադար աղօթք մատուցանեմք Աստուծոյ՝ մեր
Վեհափառ Թագաւորին եւ իւր ամէն պաշտօնէից համար,
եւ իւր Տէրութեան ամէն բնակչաց խաղաղութեանը
եւ յաջողութեանը համար:

Եւ մասնաւորապէս մեր Ազգին համար սրտանց կը-
փափարիմք եւ Աստուծմէ կը խնդրեմք որ պարգեւէ ա-
նոնց ամէն հոգեւոր օրհնութիւն մեր Տէր Յիսուս Քրի-
ստոսով, մտքերնին լուսաւորելով եւ սրտերնին ար-
դարութեան ոգիով՝ մարդասիրութիւնով՝ եւ Աստուա-
ծային սիրով լեցնելով, Ամէն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

1846. Օգոստոս 25:



ԳՒՆՆՈՒԹԻՒՆ

ՈՐՈՒՆ

ՆՈՐ ԱՆԳԸՄՆԵՐԸ ԵՎԵՂԵՑԻՈՅ ՍՂԶ,
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԱՏԵՆՆԻՆ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ
ԿՈՒՏԱՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ ԱՌՋԵԻԸ

Ը. Կը հաւատամ թէ մի միայն կենդանի եւ ճշմարտ
Մտուած մը կայ, եւ թէ ինքն է Արարիչ Պահպանող
եւ Կառաւարող տիեզերաց. ամենակարող՝ ամենագէտ՝
ամենուրեք, ինքնագոյ՝ ինքնիշխան՝ անփոփոխելի. թէ
ինքը անհուն սէր՝ իմաստութիւն՝ սրբութիւն՝ սրբարու-
թիւն՝ ողորմութիւն եւ ճշմարտութիւն ունի, եւ թէ մի
միայն իրեն կը վայելէ երկրպագութիւն:

Ի. Կը հաւատամ թէ Մտուած երեք՝ անձն ունի, Հայր՝
Որդի եւ Սուրբ Հոգի, եւ այս երեքը մէկ Մտուած են:

Գ. Կը հաւատամ թէ Սուրբ Գիրքերը՝ որոնք են Հին
եւ Նոր Կտակարանները, Մտուածոյ շունչն են, եւ իր
կամացը յայտնութիւնն են՝ մարդոց տրված, եւ թէ կա-
տարեալ եւ մի միայն կանոն են հաւատոյ եւ գործոց:

Պ. Կը հաւատամ թէ մարդկային ցեղը իր բնական վի-
ճակին մէջ զուրկ է սրբութենէ եւ բոլորովին ապական-
եալ է, եւ արգարապէս Մտուածոյ բարկութեանը տակն
ինկած:

Ե. Կը հաւատամ թէ Տէր Յիսուս Քրիստոս՝ Մտ-

Յետձ կատարեալ եւ մարդ կատարեալ, մի միայն փրկու-
կիչ է մեղաւորաց եւ մի միայն Սիջնորդ եւ Մարնխօս
Մտուածոյ եւ մարդոց մէջը, եւ թէ իր կատարեալ հնազան-
դութիւնովը՝ շարձարանքներովը ու մահուամբը կատա-
րեալ քառութիւն ըրաւ մեղաց, անանկ որ բոլոր իրեն
հաւատացողները անշուշտ կը փրկուին. եւ թէ մեղաց հա-
մար ուրիշ պատարագ չկայ:

Զ. Արհաւատան թէ մարդիկ սասնկ չար ըլլանուն
համար՝ հարկաւոր է որ վերստին ծնանին Հոգւոյն Ար-
բոյ զորութիւնովը որ կարենան փրկուիլ:

Է. Արհաւատան թէ մի միայն Վրիստոսի արդարու-
թիւնովը կրնանք արդարանալ հաւատքով, եւ ոչ թէ
պահքով՝ ողորմութիւն տալով՝ ապաշխարանք քաշելով
եւ որ եւ իցէ մեր գործքերովը. եւ թէ թէպէտ Բաղէ
Գործէքը անքակտելի կապով մը կապված են ճշմարիտ
եւ կենդանի հաւատոյ հետ, սակայն անոնցմով արժա-
նաւորութիւն չեմք կրնար ունենալ Մտուածմէ փրկու-
թիւն գանելու:

Ը. Արհաւատան թէ ամէն հաւատացեալ չէ թէ միայն
պարտական է սուրբ վարք մը ունենալ, եւ դէպ ի Մտ-
տուածոյ եւ դէպ ի ընկերին եւ՝ դէպ ի իրեն ունեցած
պարտքերը երկխղճութեամբ կատարել, հապա որ ասոնք
քրիստոնէին բուն յատկութիւններն են:

Թ. Արհաւատան թէ Մտուածմէ ի զատ ուրիշ էակի
երկրպագութիւն մատուցանելու եւ զանիկայ պաշտելու
չէ, եւ Սուրբ Արբորութեան երկք անձն ալ արժանի
են երկրպագութեան, որն՝ որ ուրիշ միջնորդի մը ձե-
ւամբ մատուցվի նէ ընդունելի չըլլար, այլ Յիսուս



Վրիստոսի մի միայն միջնորդին ձեռքովը, և և թէ մաշ
սունքներ՝ խաչեր՝ պատկերներ և և որ և և իցէ տեսակ
արձաններ կրօնական կերպով գործածելը, և սուրբերը
բարեխօս բռնելը ուղղակի հակառակ են Սուրբ Գրոց,
և շատ անհաճոյ են Աստուծոյ, և թէ ննջեցելոց հաւ
մար աղօթք ընելը Աստուծոյ խօսքէն դուրս բան է:

ժ. Ար հաւատամ թէ մեռեալները յարութիւն պիտի
տանեն թէ արդարները և թէ մղաւորները, և և դաւ
ասատանի օր մը կայ դալու՝ և թէ արդարոց երջան-
կութիւնը և չարագործաց պատիժը մեռնելուն պէս
կ'սկրսի և յախտանս Հպիտի վախճանի:

ժ.Ա. Ար հաւատամ թէ ինչ և իցէ թուով ճշմարիտ
Վրիստոսնայք օրինաւոր կարգադրութեամբ կազմուած՝
Վրիստոսի Ակեղեցին են, որուն գլուխը մի միայն Վր-
րիստոս է, և թէ Ակեղեցոյ խորհուրդներն են Ս'ր-
գոս-Բիւնն ու Հաղորդութիւնը միայն, թէ Ս'կրտութիւնն
է կնիք Ալիտին, և նշան Հողոյն Սրոյ սրբացուցիչ գոր-
ծողութեանը, ու նաև նշան տեսնելի Ակեղեցոյ մջ
ընդունվելուն, և Հաղորդութիւնն է տեսնելի նշանակ-
ներով Վրիստոսի մահը ցուցնելով՝ իր քաւարար սի-
բոյն մշտնջենաւոր մկ յիշատակը, և իրենն ու բոլոր
ճշմարիտ հաւատացելոց հետ միութեան և հաղորդու-
թեան գրաւ:

ժ.Բ. Ար հաւատամ թէ Ա. ետարանին քարոզութիւնը
Վրիստոսի սահմանած այն մեծ գործիքն է մարդիկ դար-
ձի բերելու և իր ժողովուրդին շինութիւնը յառաջա-
ցունելու թամար, և թէ իր եկեղեցիին պարտքն է կա-
տակելու Փրկչին այս պատուերը, թէ «Կացէք բոլոր



աշխարհ և քարոզեցէք Աւետարանը բոլոր արարածն
ներուն” :

ՈՒՒՆՏԱՂՈՒՐՈՒԹՒՄՆԵՐ

ՈՐ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԱՆԳԱՄԸ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԵՎԵՂԵՑԻՒՆ ՀԵՏ ԿԸՆԵ

Իրոնարհութեամբ յուսալով որ Վրիստոսի հետ մի-
ացած ևս կենդանի հաւատքով մը, և ինքզինքդ ան-
հրաժեշտ պարտաւորութեան տակ ճանչնալով զինքը
մարդոց առջեւ զաւանելու, և իր տեսանելի Ակեղե-
ցիին հետ միանալու, այս ժողովոյս և Աստուծոյ առ-
ջեւ անկեղծութեամբ կը դաւանիս, թէ դուն ընտրեցիր
Տէրը՝ ՂՀայր և զՊրդին և զՍուրբ Հոգին, քեզի
Աստուած՝ Փրկիչ և Սրբիչ ըլլալու, և Սուրբ Գիր-
քը՝ քու մի միայն հաւատոյ և գործոց կանոնդ ըլլալու :
Ինքզինքդ և ինչ որ քուկդ է՝ բոլորը Աստուծոյ ծա-
ռայութեանը կը նուիրես, խոստանալով՝ Աստուծոյ օգ-
նութեամբ իրեն կատարէալ հնազանդութեան կեանք
մը անցունելու, իր շարաթը սուրբ պահելով, իր խօս-
քին մէջը ցուցված ճշմարտութեան՝ արդարութեան և
զգաստութեան կանոնները պահելով, բոլոր կարողու-
թիւնովդ ջանալով Վրիստոսի կրօնքը աշխարհիս մէջ

տարածելու, եւ միշտ արդարութեան՝ ժողովարութեան՝ սիրոյ եւ բարեպաշտութեան օրինակ ըլլալու:

Նաեւ կը խոստանաս այս Ակեղեցւոյն անդամներուն հետ քաջելու՝ ինտոր որ Աստուծոյ ընտանեացը անդամներուն կը վայելէ, մարդասիրական դործքերու եւ քրիստոնէական պարտաւորութիւններու մէջ, զուարթութեամբ հնազանդելով անոր խրատին եւ կանոններուն:

Հողոյն Արրոյ օգնութեանը ապաւինելով՝ այս ահեղ դաւանութիւնը ու խոստմունքները կ'ընես այս ժողովոյս եւ Աստուծոյ առջեւը, որ ինքն է քննող սրտից եւ դատաւոր բոլոր աշխարհի:

Նոր ընդունիլու անդամը վերոյնշեալ ուխտը ընելն էրա՞ն՝ Արեցը Ակեղեցւոյ խոխունի կ'ընէ:

«Որեմն մենք ալ սիրով զքեզ այս Ակեղեցւոյ միաբանութեանը կ'ընդունիմք, խոստանալով քու վրայ հակել քրիստոնէական դուժով եւ հաւատարմութեամբ, եւ ամեն կերպով այն բարեկամութեամբ եւ այն եղբայրական սիրովը վարվել քեզի հետ, որ դէպ ի մեզի ունեցած սուրբ առնչութիւնդ կը պահանջէ. միշտ ազօրութեամբ սր դուն եւ մենք վերջապէս ներկայանանք մեր Տերօջ առջին մեծ ուրախութեամբ», ամէն:

